



# ՇՍԿ (Շնչառական սինցիտիալ վիրուս՝ RSV). փաստեր պատվաստման մասին

## Շնչառական սինցիտիալ վիրուս (ՇՍԿ՝ RSV)

- Շնչառական սինցիտիալ վիրուսը **շատ վարակիչ** շնչառական վիրուս է, որը կարող է որոշ մարդկանց մոտ առաջացնել մրսաձուլություն հիշեցնող ախտանիշներ, սակայն մյուսների մոտ կարող է նաև առաջացնել թոքաբորբ և ծանր հիվանդություն:
- Շնչառական սինցիտիալ վիրուսը կարող է ծանր լինել **Նորածինների և այն տարեցների համար, որոնք ունեն առողջական այլ խնդիրներ**:
- Շնչառական սինցիտիալ վիրուսի սեզոնը սովորաբար աշնանից գարուն է:
- Շնչառական սինցիտիալ վիրուսի դեմ պատվաստումները հասանելի են նորածինների, տարեցների և հղի կանանց համար՝ կանխարգելելու ՇՍԿ հիվանդության ծանր դեպքերը:
- Ներկայումս շնչառական սինցիտիալ վիրուսի դեմ պատվաստանյութը ամենամյա չէ, այսինքն՝ մարդիկ կարիք չունեն յուրաքանչյուր սեզոնին ստանալ մեկ դեղաչափ:



## Նորածինների և մանկահասակ երեխաների պաշտպանությունը ՇՍԿ-ից (RSV)

### ՇՍԿ (RSV) պատվաստանյութ հղիների համար՝ պաշտպանելու նորածիններին

- Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոնները (CDC) խորհուրդ են տալիս մայրերի պատվաստում (Abrysvo, Pfizer) հղի կանանց համար, որպեսզի պաշտպանեն նորածիններին շնչառական սինցիտիալ վիրուսով ծանր հիվանդանալուց:
- Պատվաստումն **արվում է սեպտեմբերից մինչև հունվարի վերջ**, երբ հղիությունը 32-ից 36 շաբաթական է՝ նորածիններին շնչառական սինցիտիալ վիրուսից պաշտպանելու համար:
- Եթե հղի անձը նախորդ հղիության ընթացքում պատվաստվել է շնչառական սինցիտիալ վիրուսի դեմ, ապա նա կարիք չունի նորից պատվաստվելու ներկայիս հղիության ընթացքում: Սակայն նորածինը պետք է ստանա ՇՍԿ (RSV) պատվաստանյութի մեկ դեղաչափ. այն հայտնի նաև Nirsevimab, որը շնչառական սինցիտիալ վիրուսը կանխարգելող հակամարմին է:

### ՇՍԿ (RSV) պատվաստանյութ նորածինների համար (կանխարգելիչ մոնոկլոնային հակամարմիններ)\*

- Nirsevimab-ը խորհուրդ է տրվում 8 ամսականից փոքր նորածինների համար, ովքեր ծնվել են շնչառական սինցիտիալ վիրուսի՝ իրենց առաջին սեզոնի ընթացքում կամ կամ մտնում են առաջին սեզոն, եթե՝
  - Հղիության ընթացքում մայրը ՇՍԿ (RSV) պատվաստանյութ չի ստացել:
  - Հայտնի չէ՝ արդյոք մայրը պատվաստվել է ՇՍԿ-ի դեմ, թե ոչ:
  - Նորածինը ծնվել է ՇՍԿ պատվաստանյութով մոր պատվաստվելուց հետո 14 օրվա ընթացքում:
  - Այն նորածինների մեծ մասը, որոնց մայրերը պատվաստվել են ՇՍԿ պատվաստանյութով, կարիք չունեն ստանալ Nirsevimab:
- **8-19 ամսական նորածիններն ու երեխաները**, ովքեր գտնվում են ՇՍԿ-ով ծանր հիվանդանալու մեծ վտանգի տակ և մտնում են իրենց երկրորդ ՇՍԿ սեզոնը, պետք է ստանան nirsevimab-ի (Beyfortus) **մեկ դեղաչափ**:
- Այս արտադրանքն ապահովում է շնչառական սինցիտիալ վիրուսի դեմ **պաշտպանության կարևոր շերտ**:  
 \***խորհուրդները [Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններից \(CDC\)](#) և [Ամերիկյան մանկաբուժության ակադեմիայից \(AAP\)](#) են:**

## 60 տարեկան և ավելի բարձր տարիքի մեծահասակներ

- CDC-ն խորհուրդ է տալիս, որ **75 տարեկան և ավելի բարձր տարիքի մեծահասակները և 60-74 տարեկան այն մեծահասակները**, որոնք ունեն որոշակի ռիսկային գործոններ,՝ ստանան ՇՍԿ (RSV) պատվաստանյութի մեկ դեղաչափ:
- Պատվաստվելու լավագույն ժամանակը ամռան վերջն է կամ աշնան սկիզբը՝ մինչև այն պահը, երբ շնչառական սինցիտիալ վիրուսը սովորաբար սկսում է տարածվել համայնքում: Սակայն իրավասու չափահասները կարող են ցանկացած պահի ստանալ ՇՍԿ պատվաստանյութ:
- Շնչառական սինցիտիալ վիրուսի դեմ պատվաստումը կարելի է անել մյուս պատվաստումների հետ միաժամանակ:
- ՇՍԿ պատվաստանյութերը, որոնք տրվում են այս տարի, ներառում են՝ GSK-ի Arexvy, Moderna-ի mRESVIA և Pfizer-ի Abrysvo:  
 \* **խորհուրդները [Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններից \(CDC\)](#) և [Պատվաստումների գործողությունների խորհրդատվական կոմիտեից են \(ACIP\)](#):**

## Ինչպես պատվաստվել

Խոսեք ձեր բժշկական մատակարարի հետ ՇՍԿ-ի (RSV) դեմ պատվաստվելու մասին: ՇՍԿ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [cdc.gov/rsv/index.html](https://www.cdc.gov/rsv/index.html):

[ph.lacounty.gov/RSVImmunizations](https://ph.lacounty.gov/RSVImmunizations)

RSV Immunization Facts (08/14/24) (Armenian)

